Թեհմինա Մարության
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար,
Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս
tmarutyan@mail.ru

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ <<ՍՓԻՒՌՔ>> ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ

Թ.Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Բանալի բառեր: Սփյուռք, շաբաթաթերթ, Սիմոն Սիմոնյան, Արցախյան հիմնահարց, Արցախ, Նախիջևան, Սովետական Միություն, սփյուռքահայություն:

Tehmina Maroutyan

ARTHAKH ISSUE IN THE PAGES OF SIMON SIMONYAN'S "SPYURK" WEEKLY PAPER

From 1958 to 1978, in Beirut, by the initiative and editorial of Lebanon-Armenian famous writer, philologist, historian and publicist Simon Simonyan the "Spyurk" literary, artistic, public weekly magazine published in Beirut in 1958-1978 which has its unique trajectory in the history of both Lebanese-Armenian's and in Diaspora's media. The Diaspora gave wide importance to the socio-political life in its pages, had a national-liberal direction. One of the main themes of the paper was the issue of Artsakh and Nakhijevan, the issues of the solution of the domestic lands. The present study is dedicated to the Artsakh issue as presented in the "Spyurk" weekly paper.

Key words: Diaspora, weekly paper, Simon Simonyan, Artsakh issue, Artsakh, Nakhijevan, Soviet Union, Armenian Diaspora.

Теймина Марутян

ОСВЯЩЕНИЕ АРЦАХСКОЙ ПРОБЛЕМЫ В ЕЖЕНЕДЕЛЬНИКЕ "СПЮРК"

Симон Симонян - известный ливанский писатель, лингвист, историк и публицист армянского происхождения, редактор литературного, художественного, общественного еженедельника "Спюрк". "Спюрк", издающийся в период от 1958-1978гг. в Бейруте, оставил неизгладимый след в истории армяно-ливанской и всей армянской диаспоры. В журнале особое внимание было уделено отображению социально-политической реальности и национально-освободительной идеологии. Одна из затрагиваемых ключевых тем был вопрос армянских земель Арцаха и Нахичевани. Эта статья посвящена освящению арцахской проблемы в еженедельнике "Спюрк".

Ключевые слова*: диаспора, еженедельник, Симон Симонян, арцахский вопрос, Арцах, Нахичевань, Советский Союз, армянская диаспора*

Լիբանանահայ նշանավոր գրող, բանասեր, պատմաբան, հրապարակախոս Սիմոն Սիմոնյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ Բեյրութում 1958-1978թթ. հրատարակված «Սփիւռք» գրական, գեղարվեստական, հասարակական շաբաթաթերթը լիբանանահայ և, ընդհանրապես, Սփյուռքի մամուլի պատմության մեջ իր ուրույն հետագիծն ունի: «Սփիւռք»-ն իր էջերում լայնորեն տեղ է հատկացրել նաև հասարակական- քաղաքական կյանքին, ունեցել ազգային-ազատական ուղղություն: Թերթի արծարծած գլխավոր թեմաներից մեկը Արցախի ու Նախիջևանի հիմնահարցն էր, հողային ներքին հարցերի լուծման ուղիներին նվիրված խնդիրների քննարկումը:

Ներկա ուսումնասիրությունը նվիրված է «Սփիւռք» շաբաթաթերթում Արցախյան հիմնահարցի արծարծումներին: Վերլուծվում են թերթում տեղ գտած կարևորագույն հրապարակումները, որոնց հենքի վրա ուրվագծվում է «Սփիւռք»-ի ակտիվ դերակատարությունը

Արցախյան ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման ու զարգացման գործում:

Հենց առաջին համարից պարզ է դառնում, որ «Սփիւռք»-ը ասպարեզ է մտնում՝ ունենալով «անելիք, հաւատք՝ մեր ընելիքին հանդեպ եւ քաջութիւն՝ մեր ընելիքը բարձր չափանիշով իրագործելու»[1]: Ի թիվս այլ առաջադրությունների՝ «Սփիւռք»-ն ի սկզբանե հայտարարում է, որ չի ենթարկվելու որևէ կուսակցության «թեւարկումին» և լինելու է անկախ՝ «Արարատի պէս» և լինելու է դարձյալ Արարատի պես հայկական, նույնիսկ օտար հողի վրա[2]: Մատնանշելով թերթի դիրքն ու անելիքը՝ Սիմոնյանը գրում է. «Միամիտ չենք կարծելու, որ մեր ճամբան ծածկուած է միայն վարդերով: Դեռ ճամբայ չելած արդեն արիւնոտուած ենք փուշերէ»[3]: Թերթի բոլոր հրապարակումները, ազգային այժմեական հարցերի քննարկումները տոգորված էին ազատախոհությամբ, պայքարի ոգով: Հայ ժողովրդի ամբողջականության ու միասնականության հավատը մշտապես ուղեկցել է «Սփիւռք»-ին, որի մեկնակետը «հայ ժողովրդի եւ անոր դարաւոր Հայրենիքին յաւերժացեալ ամբողջացումն» էր[4]: Իսկ դա հնարավոր էր միայն «հայկական հողերու» հարցի լուծման, Ղարաբաղի, Նախիջևանի ու Ախալքալաքի՝ հայրենիքին վերամիավորելու իրողություններով:

«Սփիւռք»-ը միշտ «մատը դրած է այն նիւթերու վրայ, որոնց մասին արգիլուած էր խօսիլ կամ գրել»[5], ուստի պատահական չէ, որ թերթը ունեցել է մոլեռանդ հակառակորդներ թե՛ Սփյուռքում, թե՛ հայրենիքում: Հատկապես հայրենիքի դռները Սիմոն Սիմոնյանի առաջ փակվեցին, երբ նա 1958 թվականից արդեն համարձակություն ունեցավ սովետական մտակաղապարներին ոչ հարիր ազգային հարցեր բարձրացնել, որոնց թվում հայկական հողերի՝ Ղարաբաղի, Նախիջևանի ու Ախալքալաքի՝ Սովետական Հայաստանին կցելու առաջարկ-պահանջն էր, ինչպես նաև Հայոց Եղեռնի ճանաչումն ու դատապարտումը:

«Սփիւռք»-ն էր, որ առաջինը հրապարակ հանեց Եղեռնի 50-ամյա տարելիցը համազգայնորեն ոգեկոչելու պահանջը՝ առաջարկելով մշակված ծրագրեր, դարձյալ «Սփիւռք»-ն էր, որ 1958-1959թթ. մեջտեղ բերեց Ղարաբաղի խնդիրը: Էական է նկատել, որ Սփյուռքում(և ոչ միայն Սփյուռքում) Սիմոն Սիմոնյանն առաջինն էր, որ 1960 թվականին բաց նամակով դիմեց Ադրբեջանի ԽՍՀ-ի նախագահին և պահանջեց ԼՂ-ի, Նախիջևանի մարզերը վերադարձնել պատմական հայրենիքին:

«Սփիւռք»-ի մատենագիտության նախախոսքում Սիմոնյանը գրում է. «Հարկ է հիշեցնել, որ «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ յայտնուեցան <u>առաջին գաղափարներ</u>, առաջին անգամ մտածուած առաջարկներ ու պահանջներ, ինչպես Ապրիլեան Եղեռնի յիսնամեակի ոգեկոչում, հողային պահանջ, հայկական դատ արիական պայքարով, հայկական դրամատուներու ցանց, Հայկական կեդրոնական գերագոյն Մարմին եւ այլն եւ այլն: Այսօր այնքան տարածուած ու շեփորուած այս եւ այլ գաղափարներու առաջին հունտերը պետք է փնտրել «Սփիւռք»-ի էջերուն մէջ»[6]:

Հայկական հողերի վերամիավորման պահանջը շուրջ երկու տասնամյակ «Սփիւռք»-ը բարձրաձայնեց «անկաշկանդ ճշմարտախոսությամբ», հարթող, մերթ անզուսպ քննադատությամբ՝ ձեռք բերելով հակառակորդներ և՛ ներքին և՛ արտաքին ճակատներում: Գտնվեցին պարբերականներ ու առանձին մտավորականներ, որոնք «մեծ փութկոտությամբ ու եպերելի միամտությամբ» մեղադրեցին Սիմոնյանին՝ «Սփիւռք»-ի պահանջը դիտելով անժամանակ, անճիշտ և նույնիսկ … վնասակար: Թերթը, սակայն տոկաց ու չնահանջեց գրեթե 17 տարի, ինչպես Սիմոնյանն է ցավ ի սիրտ նշել՝ «բարոյապես միայն հաղթելով՝ Վարդանանց պատերազմին պէս»[7]:

Սփյուռքահայ շրջանում Ղարաբաղյան հիմնահարցի ուսումնասիրման ու լուսաբանման համար բացառիկ կարևորություն ունեն «Սփիւռք»-ում հրապարակված նյութերը, հատկապես Սիմոնյանի հեղինակած ծրագրային բնույթի խմբագրականները:

---

[1] «Սփիւռք», 1958, թիվ 1, 4 ապրիլի, էջ 3:
[2] Նույն տեղում, էջ 4:
[3] Նույն տեղում, էջ 4:
[4] «Սփիւռք», 1958, թիվ 3, 20 պրիլի, էջ 3:
[5] Մատենագիտութիւն Սփիւռք շաբաթաթերթի, Բեյրութ, 1984, էջ
[6] Մատենագիտութիւն Սփիւռք շաբաթաթերթի, կազմ.՝ Ս. Օգնայեան, Բեյրութ, 1984, էջ Ե:
[7] Նույն տեղում, էջ Է:

«Սփիւռք»-ում 1960 թվականին Սիմոնյանը ստորագրում է առաջին ծավալուն առաջնորդողը՝ «Հայկական հողերու հարցը» խորագրով: Հայաստանի խորհրդայնացման 40-ամյակը համարելով լավագույն առիթը՝ նա հանրության ուշադրությունը կենտրոնացնում է համազգային նշանակություն ունեցող կենսապահպան հարցին՝ հանդես գալով պատմական Հայաստանի «օրկանական մաս» կազմող, էապես ու հարազատորեն հայկական Նախիջևանը, Ղարաբաղը և Ախալքալակը Հայաստանին վերադարձնելու պահանջով: Սովետական Հայաստանը, Սիմոնյանի կարծիքով, վաստակել է հայրենական հողերին տեր կանգնելու իրավունքը, քանզի քառասուն տարիներ ի վեր «անտրտունջ, յաճախ ամենէն դաժան պայմաններու մէջ» իր նվիրումով ու հավատարմությամբ ծառայել է Սովետական Միության իդեալներին: Նա հիշեցնում է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովուրդը զոհաբերեց իր կարելիությունների ու հնարավորությունների առավելագույնը: «Բոլոր շքեղ իրագործումներուն, անհաշիւ զոհաբերութեանց եւ անշահախնդիր հաւատարմութեանց ու նուիրումին համար հարկ է, որ վարձատրուի հայ ժողովուրդը»[1]: Հայ ժողովրդի պատմական, արդար ու հայրենական հողերը վերադարձնելով՝ Սովետական Միությունը կունենա կենսական մեծ շահեր՝ «կ՚ապացուցանէ իր արդարադատութիւնը», Ադրբեջանը և Վրաստանը կփաստեն իրենց եղբայրական» վերաբերումը, Սփյուռքի հայության սերն ու վստահությունը պիտի աճեն ու զորանան Սովետական Միության հանդեպ և, վերջապես, Սիմոնյանի համոզմամբ, Սովետական Միությունը իր հարավային սահմանների մեջ կունենա տարածությամբ ու բնակչությամբ հզոր ու վստահելի պատնեշ՝ ի դեմս Հայաստանի: Սիմոնյանը պարզ ու որոշակի փաստարկումներով ավելորդ չի համարում հիշեցնել, որ Սովետական Միությունը պետք է հաշվի նստի պատմական ճշմարտության հետ և ընդունի, որ Ղարաբաղը, Նախիջևանը և Ախալքալակը «անբաժանելի ու արդար» հողամասերն են եղել պատմական Հայաստանի:

«Սփիւռք» շաբաթաթերթի 1960 թվականի օգոստոսի 13-ի համարում հրապարակվում է Սիմոնյանի բաց նամակը[2] Ադրբեջանի հանրապետության նախագահին, որում նա «խորհրդային» եղբայրության ու համերաշխության դիրքերից հիշեցնում է պատմական ճշմարտությունը, այն, որ նախասովետական շրջանի անարդար կարգադրությամբ հայրենիքից բաժանված և Ադրբեջանին բռնակցված երկու շրջանները պետք է վերադարձվեն իրական տիրոջը՝ Հայաստանին: «Հայաստանի խորհրդայնացման քառասունամյակը շքեղ առիթն է Ձեզի, ձեր երկրին եւ անոր բարի ժողովուրդին համար՝ տալու փաստը իր իրաւ եղբայրութեան, ինչպես նաեւ իրաւակարգի ուսմունքին մէջ դաստիարակութեան իր չափանիշին»,- գրում է Սիմոնյանը[3]: Միջանկյալ նշենք, որ Ղարաբաղի ու Նախիջևանի խնդրով դա առաջին բաց նամակն էր: Հետաքրքրական է թերթի նույն համարում հրապարակված «Ինչու՞ Սփիւռքի հայութիւնը պէտք է որ պահանջէ հայկական հողերը» խորագրով ակնարկը, որում արդեն Սիմոնյանը խորացնում է վերլուծական հայացքը՝ հարցը քննելով Խորհրդային Հայաստան-Սփյուռք քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների համատեքստում: Ստեղծված իրապայմաններում «սովետական» հայությունը որքան էլ պահանջ զգա իրականացած տեսնելու Ղարաբաղի, Նախիջևանի ու Ախալքալակի վերամիավորումը մայր հայրենիքին, չի կարող իր արդար պահանջն արտահայտել «ոչ պետական երկիրներու մէջ ընդունուած կերպերով, որոնք այնտեղ – Սովետական Միութեան մէջ – ընդունելի եւ արտոնուած չեն»[4]: Հետևաբար Սփյուռքի հայութանը վիճակված է բախտորոշ դեր՝ հայկական հողերի պահանջը բարձրաձայնելու: Արտասահմանի հայ քաղաքական ղեկավարները ոչ միայն Սփյուռքի հայությանը չեն կազմակերպել այդ ուղղությամբ, այլև, Սիմոնյանի համոզմամբ, գործել են լուրջ սխալներ և պատճառ դարձել մեր արդար պահանջի իրագործման հապաղման: 1. «Սփիւռքի Հայաստանի բարեկամ հատուածներու պահանջք չներկայացնելը, այսինքն ցաւալի լռութիւնը Սովետական Միության մէջ լռելեայն մեկնաբանուած է որպէս մեր արդար պահանջքին ոչ-անհրաժեշտ եւ ոչ – անմիջական ըլլալուն իրողութիւնը», 2. «Միւս կողմէ, երբ մեր այդ արդար պահանջքը ներկայացնելու «մենաշնորհը» ձգուած է ներկայ Հայաստանի թշնամի հատուածին, այսինքն՝

[1] «Սփիւռք», 1960, թիվ 31, 13 օգոստոսի, էջ 2:
[2] «Սփիւռք», 1960, թիվ 32, 20 օգոստոսի, էջ 1:
[3] Նույն տեղում, էջ 1:
[4] Նույն տեղում, էջ 2:

Դաշնակցութեան, մեր արդար պահանջքները վերածուած են հակառակորդի, թշնամիի, «ազգայնական» արտահայտութիւններուն»:

Տողատակն արդեն բացում է հարցի միջուկը, Խորհրդային Հայաստան-Սփյուռք հարաբերությունների գլխավոր կնճիռը՝ հատկապես հողային պահանջի առնչությամբ, ինչը համարվում էր «ազգայնամոլություն», այսպես ասած, Դաշնակցության պահանջ, ինչն անհարիր էր Խորհրդային Միության Կոմկուսի ազգային քաղաքականությանը: Խորհրդային տարիներին հստակ ձևավորված գաղափարախոսությամբ ու կենտրոնացված ղեկավարմամբ անհանդուրժողական վերաբերմունք էր դրսևորվում այլախոհական մտքերի նկատմամբ, որպիսին նաև Ղարաբաղի հարցն էր: Ժամանակի գաղափարախոսական թելադրանքներից բխող «ազգայնական թեմաների» կապանքը հայրենիքում փոքր-ինչ թուլացավ 1965-1970-ական թթ., երբ Ղարաբաղի հիմնախնդիրը թևակոխեց քննարկումների նոր հանգրվան:

Սիմոնյանի խորամիտ դիտարկումով՝ Հայաստանի պետական ղեկավարությունն ու ժողովուրդը անցնող քառասուն տարիների ընթացքում չկարողացան պահանջներ ներկայացնել՝ «հարկադրուած ըլլալով յարգելու միջպետական այն «էթիքեթը», որ գոյութիւն ունի «եղբայրական» հանրապետութիւնների միջև»[1]: Հայկական Սփյուռքն այդ պարագայում բախտավոր իրողություն է, և Սփյուռքից էլ մայր ժողովուրդը սպասում է «մանաւանդ հայկական հողերու պահանջումը»: Ավելին, Սովետական Միությունը Սփյուռքի պահանջը ստիպված է հաշվի առնելու, որովհետև Սփյուռքը Սովետական Հայաստանի համար եղել է «նպաստավոր ազդակ մը՝ նիւթապէս թէ բարոյապէս, որի համար արժանի է վարձատրուելու»: «Շքանշանները բաւարարութիւն չեն տար մեզի, - գրում է Սիմոնյանը: - ամբողջ հայ ժողովրդի վիզին համար ռեւէ շքանշան հեգնանք պիտի թուի»[2]: Հայ ժողովրդի համար խորհրդայնացման 40-ամյակի առթիվ կա մեկ շքանշան՝ հայկական նահանգների վերամիավորումը մայր հայրենիքին, ինչից հետո այն կդառնա Սփյուռքի հայության վերադարձի օրրանը: «Առաջին զանգը հնչեցնելու նուիրական առաքելութիւնն ու պատիւը կ'իյնան Սփիւռքի հայերու ուսերուն»:

«Սփիւռք»-ը հետևողականորեն արձագանքել է ժամանակի սփյուռքահայ մամուլի («Յառաջ», «Խթան», «Պայքար», «Յուսաբեր» և այլն)՝ Ղարաբաղի հարցի շուրջ քննադատական հրապարակումներին, վկայակոչումներին, տեսակետերին, հայրենիքից եկող «բարենշան» նորություններին, որոնց շուրջ արտահայտել է ուրույն կարծիքներ, տվել համարձակ գնահատականներ: «Սփիւռք»-ի գաղափարական ուղեգծի դեմ ի սկզբանե պայքար է մղել կուսակցական մամուլը, որին թերթը պատասխանել է անկողմնակալ, հավասարակշռված և առանց մաղձի: Այդ արձագանքների մեջ ուշագրավ է Ռամկավար ազատական կուսակցության «Պայքար» պաշտոնաթերթի՝ 1960 թվականի խմբագրականներից մեկի առթիվ գրված վերլուծականը: Բանն այն է, որ Անդրանիկ Անդրեասյանի խմբագրապետությամբ լույս տեսնող «Պայքարը» 1959 և 1960 թվականների ընթացքում բազմիցս հակադրվել էր «Սփիւռք»-ին՝ մեղադրելով հողային հարցն արծարծելու մեջ և թերթի պահանջը գտնել «անժամանակ, կանխահաս, վնասակար եւ ... ռոմանդիկ»[3]: Եվ ահա «Պայքար»-ի վերոնշյալ խմբագրականն արժանանում է «Սփիւռք»-ի քննադատությանը: Սիմոնյանը նախ «հապաղած» է համարում թերթի հետդարձը խնդրին մի հոդվածով, որ «ՃԻՇԴ ու ՃԻՇԴ մեր ոգիով, մեր պատճառաբանութեամբ եւ յաճախ մեր բառերով նոյնը կը պահանջէ», և ապա մեղադրում է «Պայքար»-ին՝ խմբագրականի՝ ակամա և հարկադրանքով գրած լինելու մեջ: Այն դեպքում, երբ Սփյուռքի հայությունը ճակատագրական ու բախտորոշ դեր ուներ հողային պահանջի իրագործման մեջ, նույն այդ հայությունը 1950-ականներից սկսած թերացավ իր առաքելության մեջ՝ զոհ գնալով «Պայքարն»-երու թերի և անընդունելի ուղեցուցումներուն և «սովետագիտությանը»: Իսկ հապաղած ամեն ձեռնարկ քիչ հավանակություն ունի հաջողության: Անդրադառնալով «Պայքար»-ի առաջարկած լուծման տարբերակին, թե «Մոսկուայի կառաւարութիւնը ուղղակի դէր մը պիտի չունենայ Նախիջեւանի ու Ղարաբաղի Հայաստանի վերադարձուելու մէջ» և սահմանադրութիւնը իրավունք է երաշխավորում անդամ հանրապետություններին ներքին սրբագրումներ կատարելու՝ զիջողության պայմանով, «Սփիւռք»-ի խմբագիրը գրում է, որ միայն Ադրբեջանի բարեկամեցողության վրա հույս դնելը

[1] Նույն տեղում, էջ 2:
[2] Նույն տեղում, էջ 2:
[3] «Սփիւռք», 1960, թիվ 42, 29 հոկտեմբերի, էջ 1:

նշանակում է հետևել առակին. «Մայր ոչխարը իր գառնուկները յափշտակած գայլին նամակ կը գրէ, խնդրելով որ իր ձագուկները անվնաս եւ իր ձեռքով (այսինքն՝ չորս ոտքերով) վերադարձնէ...»[1]: Հիշեցնում է, որ նույն ոգևորությամբ ու հավատով «Սփիւռք»-ն էլ բաց նամակ էր հղել Ադրբեջանի ղեկավարությանը, սակայն ապարդյուն: Այս հրապարակման մեջ արդեն նկատվում է, որ թուլանում է Սիմոնյանի լավատեսությունը «եղբայրական դիրքերից» հողային հարցի լուծման նկատմամբ: Ղարաբաղի ու Նախիջևանի հարցի արծարծումը «հայրենավնաս» համարող «Պայքար»-ը սկսել էր կամարտահայտվել, ինչն արժանանում է անկախ «Սփիւռք»-ի կծու հեգնանքին՝ ուղղված կուսակցական կարգապանություն որդեգրած մամուլի օրգանին. «Բաներ կան, որոնց մասին խօսելու առանձնաշնորհումը միայն ռամկավարները ունին ՈԵԻԷ ժամանակ, միշտ հայրենասերի եւ դիւանագէտի վկայագիրներով»[2]:

Էական է նշել, որ Սիմոնյանը դարձյալ անդրադարձել է «Պայքար»-ի խմբագիր Անդրանիկ Անդրեասյանին՝ «Սփիւռք»-ի՝ 1971 թվականի սեպտեմբերի 19-ի համարում հրապարակելով Ղարաբաղին նվիրված նրա մի հոդվածը՝ «Արդարության համար» խորագրով[3]: Հոդվածին կից խմբագրական ծանուցման մեջ թերթը ժամանակավրեպ է համարում Անդրեսյանի անդրադարձը Ղարաբաղի խնդիրն՝ ցավով արձանագրելով, որ շուրջ մեկ տասնամյակ առաջ, երբ «Սփիւռք»-ն առաջ քաշեց Ղարաբաղի ու Նախիջևանի հարցը, մեղադրողներից մեկը Անդրանիկ Անդրեասյանն էր՝ նկատումով, թե «ատէնը չէ»: Հիմա նա ինքն է պանաջում Ղարաբաղը՝ ճիշտ «Սփիւռք»-ի «պատճառաբանություններով»: «Սփիւռք»-ն, այնուամենայնիվ, մեղք չի համարում Ղարաբաղ պահանջելը, եթե անգամ «յարմար ատէնը չէ» և մենք կորցրել ենք առիթը:

Սիմոնյանը տարբեր հրապարակումներում անդրադարձել է անկախ մամուլի կարևորությանն ու անհրաժեշտությանը: «Սփիւռք»-ի հրատարակության կարևոր պատճառներից մեկը նա համարել է «Հայ մտածումի անկախութեան բեմ ունենալը»[4]: «Անկախութիւնը աւելի դժուար է քան կուսակցականութիւնը – իրապէս անկախ մամուլ մը ունի նո՛յնքան նուիրական առաքելութիւն որքան կուսակցական մամուլը»[5],- գրում է Սիմոնյանը: Անկախ, սակայն, չի նշանակություն, չեզոք, ինչն ի սկզբանե եղավ «Սփիւռք»-ի սկզբունքը: Որպես անկախ ու անկուսակցական պարբերական՝ «Սփիւռք»-ը դարձավ հայության ձայնը՝ ազգային կարևոր հարցերի շուրջ կարևորելով միասնական մոտեցումի անհրաժեշտությունը:

Ղարաբաղի հարցի արծարծումը «Սփիւռք»-ի հետագա հրապարակումներում ի հայտ է բերում ուշագրավ զարգացումներ: 1961 թվականի փետրվարի 18-ի համարում Սիմոնյանը ստորագրում է «Եաշա, Գարդաշ Ատրբեճան» խորագրով խմբագրականը՝ ադրբեջանցի գրող Միրզա Իբրահիմովի՝ Հայաստանի խորհրդայնացման 40-ամյակին ուղղված շնորհավորականի առիթով: Խմբագրականը պարզում է Սիմոնյանի ներքին անհամաձայնությունը խորհրդային վարչակարգի վարած քաղաքականության նկատմամբ: «Գարդաշ» Ադրբեջանը, չվերադարձնելով Հայաստանին իր պատմական հողերը, «չեղաւ իրաւ գարտաշ», ավելին, փաստեց, թե «ինք կեղծ կոմունիստ է եւ կ'ընթանայ ազգայնամոլական ու համաթուրանական պողոտաներէն, ջրդեղուելով արտասահմանի հայութեան լռութեամբ»[6]:

Զարգացնելով իր տեսակետը հիմնախնդրի լուծման շուրջ՝ Սիմոնյանը «Հայաստանի խորհրդայնացման քառասունամեակի տօնակատարութենէն ետք» խմբագրականում լուրջ մտահոգություն է հայտնում հոբելյանի հետաձգման անհասկանալի հանգամանքների շուրջ և ենթադրյալ պատճառների համատեքստում փորձում գնահատականներ տալ հայ ժողովրդի արդար պահանջին գոհացում չտալու՝ խորհրդային միության երկդիմի քաղաքականությանը: Առաջ են քաշվում հռետորական հարցադրումներ. որևէ առնչություն ունե՞ն արդյոք «հետաձգումի թվականէն ետք» տեղի ունեցած պաշտոնանկությունները, մասնավորապես «Հայաստանի թիվ առաջին մարդուն», Կոմկուսի ղեկավար Սուրեն Թովմասյանի և գործակիցների մի խմբի շնորհազրկումը: Հայտնի է, որ Սուրեն Թովմասյանը համարձակորեն կապեր էր հաստատել նաև

[1] Նույն տեղում, էջ 1:
[2] Նույն տեղում, էջ 1:
[3] «Սփիւռք», 1971, թիվ 37, 19 սեպտեմբերի, էջ 1:
[4] Մատենագիտություն Սփիւռք շաբաթաթերթի (1958-1978), Բեյրութ, 1984, էջ Գ-Ե:
[5] Նույն տեղում, էջ Է:
[6] «Սփիւռք», 1961, 18 փետրվարի, էջ 1:

հայկական կուսակցությունների՝ հնչակների ու ռամկավարների, նրանց միջոցով նաև Սփյուռքի հետ։

Ժողովուրդը արտասահմանում ու մայր հայրենիքում սպասում էր ոչ թե հայի «հավիտենական առաքինութիւնների» մասին խրուշչովյան ճառին, այլև արդարության, քանզի նույն «Սովետական Միությունը ինքզինքը հռչակած է դրօշակիրը ժողովուրդներու արդար իրաւունքներու պաշտպանութեան»[1]։ Սիմոնյանը հիշեցնում է, որ «Սփիւռք»-ը տարիներ ի վեր անսայթաք ու անշեղ կերպով դրոշակիրն է եղել հայկական հողերի պահանջի, ինչի պատճառով ենթարկվել է հալածանքների, «սպրդասացությունների» ու բամբասանքերի՝ հաճախ այնպիսի մարդկանց կողմից, որոնց տեղը պիտի լիներ «հայ կեանքէ դուրս»։ Թերթն, իհարկե, չի զղջում ստանձած առաքելության և հանդիպած դժվարությունների համար։ Ավելին, «հպարտ ենք մեր արարքին համար, վասնզի յաղթանակեց մեր տեսակէտը եւ Հայաստանի հարազատ ժողովուրդը ձայնակից գտանք մեզի»։ Տարեդարձի մեծագույն պարգևը չունեցանք, բայց, Սիմոնյանի խորունկ եզրակացությամբ, ունեցանք ոչ նվազ թանկագին այլ բան՝ «մեր իրաւունքներուն հանդէպ գիտակցութիւն եւ հաւատքի բարձրացում»[2]։

Պետք է նշել, որ «Սփիւռք»-ը հողային հարցի լուծման ուղիները մատնանշելիս ի սզբանե գերադասելի է համարել խաղաղ ու բարեկամական միջոցների կիրառումը, դիվանագիտական ջանքերը, սահմանային «սրբագրումները», սակայն այդ ամենով հանդերձ խիստ կարևորել է ժողովդրի ներքնաշերտերում ազգային ամբողջականության, միասնականության, պահանջատիրության գիտակցություն արթնացնելը, արտասահմանում հայանպաստ շարժում առաջ բերելը, հողային հարցը համագումարներում, միտինգներում քննարկելն ու համազգայնացնելը։

Իր խմբագրականներն ու վերլուծականները Սիմոնյանը հաճախ ուղեկցում է անխնա երգիծանքով, ինչը նրա գեղարվեստական մտածողության յուրահատկությունն է։ Հիմնահարցի քննարկումներին նոր երանգ են հաղորդում թերթի «Հայկական սյունակ»-ում պարբերաբար հրապարակվող ֆելիետոնները։ «Եթե չհինցաւ Խրուշչեւի կօշիկը» ֆելիետոնում խմբագրի խայթիչ գրչի «թիրախն» է դառնում Խրուշչովի կոշիկը, որով նա զայրույթի պահին մի անգամ զարկել էր նստաշրջանի սեղանին։ Արտասահմանի հայ պատվիրակների հարցին Խրուշչովի տված պատասխանը, թե Ղարաբաղի հարցի լուծումը կենտրոնից կախված հարց չէ, այլ կախված է դրացիի բարյացակամությունից, դարձել է ազդակ, ինչի շուրջ խմբագիրը գրում է. «Պրն. Խրուշչեւ մեզի ցոյց կու տա «դրացիին բարեացակամութեան» դուռը։ Բայց եթե «դրացի»-ն շարունակէ անբարեացակամ մնալ, ով անոր պիտի տայ բարեացակամութեան դասը»[3]։ Եվ ապա, եթե դեռ չի հնացել Խրուշչովի կոշիկը, հայ ժողովուրդը «կրնա՞ անոր հույս մը կապել», գուցե ավեի հուսալի լինի կոշիկի զարկը, քան դրացիի բարյացակամությունը։

Թերթի վերլուծականներում Սիմոնյանը հանգում է այն տեսակետին, որ հայերը մեծ հույսեր չպիտի կապեն դրացիի բարյացակամության ու Խորհրդային միության արդարադատության հետ։ Ազգային քաղաքականության ուղեգիծ մշակելու և հայության արդար պահանջը իրագործելու համար Սիմոնյանն ընդգծում է «համազգային, ներդաշնակ, հաւատավոր եւ գիտակից գործակցութեան» անհրաժեշտությունը, և որպեսզի թերացումները չկրկնվեն, անհապաղ պետք է իրագործել հետևյալ հավաքական գործերը. 1. «Համագաղութային յուշագիր եւ հանրագրութիւն մեր պահանջներուն համար», 2.«Համագաղութային համագումար, հայրենակցական կազմակերպութեանց ներկայացուցիչներով»[4]։ Սիմոնյանը գործնական մոտեցում էր պահանջում Ղարաբաղյան հիմնահարցին, հայության մեջ խոսքն ավելի շատ էր, քան գործը։ Վերոնշյալ առաջադրությունները ծրագրային նշանակություն ունեին շաբաթաթերթի համար։ Պետք է անցնել գործի, որպեսզի ուժերը չջլատվեն։ Հետևում է գլխավոր հարցադրումը՝ ո՞վ պիտի նախաձեռնակ լինի՝ կազմակերպելու այդ աշխատանքները՝ եկեղեցի՞ն, Հ.Բ.Ը. Միությու՞նը, թե՞ կուսակցությունները։ «Սփիւռք»-ի կարծիքով՝ հարմարագույնը Հնչակյաններն են, որ հարցի շուրջ ի սկզբանե ցույց տվեցին «գիտակցություն, քաջութիւն եւ նախաձեռնութեան ոգի»։ Սիմոնյանի

[1] «Սփիւռք», 1962թ., 27 մայիսի, թիվ 20, էջ 1։
[2] Նույն տեղում, էջ 2։
[3] Նույն տեղում, էջ 1։
[4] «Սփիւռք», 1961թ, 3 հունիսի, թիվ 21, էջ 1։

հարդորով՝ այլևս իրավունք չունենք թերանալու, հանուն հայության արդար պահանջի, պետք է մոռանանք մեր «անհատական թե կուսակցական եսասիրութիւնները»։ Շատ բան կախված է միասնականությունից, մեր ազգային ինքնության դրսևորման ներուժից, ինչի վկայությունն էլ Արցախյան շարժումն էր ու փառապանծ ազատամարտը։

Ուշագրավ են Խրուշչովի՝ 22-րդ համագումարում արտասանած ճառի շուրջ Սիմոնյանի խորհրդածությունները, որոնք հրապարակվեցին «Կայծակե թուրին տակ» խորագրով[1]։ «Սփիւռք»-ի հրապարակումներից մեկում[2] Սիմոնյանը ուրախությամբ ընդգծում է, որ ցանած հունդերը ծիլեր են տալիս և ստեղծվում է միասնական հայեցակետ՝ հայկական հողերի հարցի շուրջ։ Հասունացել է ժամանակը, որ արտասահմանի հայկական բոլոր հոսանքները ազդու կերպով պահանջեն հայկական հողերի վերամիավորումը մայր հայրենիքին։ Առիթը, պարբերաթերթի ծանուցմամբ, ստեղծել է Խորհրդային միության սահմանադրության փոփոխությունը, որի նախագիծը պատրաստող հանձնախմբում են նաև չորս հայ բարձրաստիճան անձնավորություններ Ա.Միկոյանը, Հ.Զարոբյանը, Շ.Առուշանյանը և Ա.Արզումանյանը։ «Սփիւռք»-ի խմբագիրը ողջունում է «Արարատ», «Զարթոնք» ու «Նաիրի» պարբերաթերթերի ակտիվ դիրքորոշումները և դարձյալ կոչ անում միահավաքվելու հայրենի հողերը վերադարձնելու ազգուխտյալ գաղափարի շուրջ։

Սիմոնյանը բազմիցս ցավով նշել է, որ «Սփիւռք»-ն ունեցել է ավելի թշնամիներ, քան համակիրներ։ Եղել են մարդիկ, որոնք թերթին մեղադրել են առանց «քաղաքագիտական ճարտարանքներու» իրականությունն ի ցույց դնելու մեջ։ Սիմոնյանի դիպուկ բնորոշմամբ՝ թերթի ընդդիմախոսները «կուսակցական կարգապահութիւնը հայրենասիրութեան հետ շփոթեցին եւ երբէք չհասկցան «Սփիւռք»-ի անշահախնդիր, քաջ և անվերաքննելի ուղղութիւնը»[3]։ Այդպիսի մի շարժառիթով Սիմոնյանը համարժեք պատասխան է տալիս Վահե Վահյանին՝ «Զարթոնք»-ում հողային հարցի շուրջ հրապարակած մի հոդվածի առնչությամբ։ Վահյանը հայկական հողերի վերամիավորման հարցադրումն ու դրա հետապնդումը համարում էր հայրենական պետության և տվյալ շրջանների բնակչության գործը և կարծում էր, որ «անժամանակ ու մանաւանդ աղմկարար ամէն միջամտութիւն արտասահմանէն» ոչ միայն չի ընծայում որևէ նպաստ այդ հարցին, այլև վտանգում է դրա լուծման հնարավորությունը։ Սիմոնյանը խիստ քննադատության է ենթարկում Վահյանի այս և նման ոչ ազգօգուտ դատողությունները։ Ռամկավար չլինելով, բայց և հանուն «Զարթօնք»-ի հայտարարություն անելով՝ Վահյանը հակասող վերագրում է անում հենց «Զարթօնք»-ին, որ նույն համարի խմբագրականում Հայաստանից անջատված հողերի վերամիավորման պահանջ է դնում և մեծապես կարևորում արտասահմանի հայության գործուն մասնակցությունը Ղարաբաղյան հիմնահարցի լուծման գործընթացին։ Մինչդեռ Վահե Վահյանը պատգամում է հակառակը՝ հողային «հարցադրումն ու անոր հետապնդումը» հանձնելով հայրենական պետությանը, այսինքն՝ Սովետական Հայաստանին, որ 42 տարի նման բան չի արել («չհաշվելով պանծալի ու դիւցազնական Աղասի Խանջյանը»[4]) և չի կարող հետապնդել հաջորդ տարիներին, որովհետև «սովետական կարգերու մէջ կեդրոնէն կամ դրացիէն բան պահանջելու օրէնքը օրէնքէն դուրս հանուած է եւ նման *էթիքէթ* գոյութիւն չունի և չի՛ կրնար ունենալ»[5]։ Քննադատության երակը խորացնելով՝ Սիմոնյանը մեղադրում է Վահյանին «հայրենի մարդոց թելադրությամբ» Սփյուռքում միտումնավոր հայտարարություն անելու մեջ։ «Դժբախտաբար հայրենիք այցելողները ճիշտ ու սխալ յայտարարութիւններ կ՚ընեն յանուն «հայրենիքի մարդոց»,-գրում է Սիմոնյանը[6]։ Իսկ «հայրենի մարդերը», բարեբախտաբար, մեկ տեսակ չեն։ «Վատ հայերը Հայաստանի թէ

[1] «Սփիւռք», 1962, 25 հունվարի, թիվ 3։

[2] «Սփիւռք», 1962, 16 օգոստոսի, թիվ 32, էջ 2։

[3] «Սփիւռք», 1961, 24 հունվարի, թիվ 3, էջ 1։

[4] Հայտնի է, որ Աղասի Խանջյանին հասցեագրված մեղադրանքների մեջ եղել է նաև Ղարաբաղի ճակատագրով մտահոգվելը։ 1962 թվականին Սիմոյանը գրում է, թե անցնող 42 տարիներին Սովետական Հայաստանը Ղարաբաղյան հարցի լուծումը չի հետապնդել, այդպիսով շրջանցում է մի եզակի ու կարևոր անկյունադարձ. 1945թ. վերջին Գրիգոր Հարությունով-Հարությունյանը համարձակվեց ուղղակի դիմել Ստալինին և առաջարկել, որ Լեռնային Ղարաբաղը միացվի Հայաստանին։

[5] «Սփիւռք», 1962, 8 նոյեմբերի, թիվ 44, էջ 2։

արտասահմանի մէջ – հայութեան ներկային ու ապագային չհաւատացող, շահախնդիր, դիմադրութենէ պարպուած եւ ուծացող հայերն են»: Եվ դժբախտաբար, արտասահմանից Հայաստան այցելողները, հատկապես մտավորականները իրենց տպավորությունները և ներշնչումները հաճախ ստանում են վատ հայերից, որոնք իրենց միջոցների շնորհիվ մոլորանքի մեջ են ձգում այցելու հայ մտավորականներին և նրանց միջոցով՝ արտասահմանի հայությանը:

«Սփիւռք»-ի 1963 թվականի դեկտեմբերի 31-ի համարում հրապարակվում է «Յուշագիր»՝ ուղղված Սովետական միության ղեկավարին՝ Ն.Խրուշչովին: Հուշագիրը ստորագրում են ԼՂ-ի շուրջ 2500 հայ բնակիչներ, որոնք պահանջում էին Ղարաբաղի միացումը Հայաստանին[1]: Թե ինչպես արձագանքեց Խրուշչովը արցախահայության պահանջին, հայտնի չէ, բայց Խրուշչովի՝ տարեմուտի պատգամը անմիջականորեն «լույս սփռեց» նրա դիրքորոշումների վրա: «Սփիւռք» շաբաթաթերթի՝ 1964 թվականը բացող առաջին համարի խմբագրականում («Բժի՛շկ, բժկեա՛ զանձն քո») Սիմոնյանը բավականին սուր կսմիթներով անդրադառնում է Խրուշչովի Ամանորյա ճառին, որով Խորհրդային Միության ղեկավարը կոչ էր անում սահմանային ու հողային վեճերի պարագայում հրաժարվել զենքի գործածությունից և նախընտրել խաղաղ բանակցությունների ուղին: Սիմոնյանին վրդովեցնում է հատկապես Խրուշչովի այն պահանջը, թե «լայնախոհութեամբ, փոխադարձ հասկացողութեամբ լուծուին հողային այն վեճերը, որոնք պատմական տուեալներու վրա կը հիմնուին եւ կամ խնդրո առարկայ կը դարձնեն կրօնական-ազգակցական հարցեր»: Հակադարձելով Խրուշչովին՝ Սիմոնյանը հարցնում է. 1. - Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցերը կը հիմնուի՞ն «պատմական տուեալներու» վրայ, 2. - Ղարաբաղի եւ Նախիջեւանի հայերը «կրօնական-ազգակցական» կապ ունի՞ն Հայաստանի հայերուն հետ: Սրելով հակազդումը՝ «Սփիւռք»-ի խմբագիրը հռետորական հատու շեշտադրումով հարցնում է, թե Խրուշչովը արցախահայության՝ իրեն ուղղած հուշագրում «չտեսա՞վ նման «պատմական տուեալներ եւ կրօնական-ցեղակցական հարցեր»: Ի՞նչ պատասխան տվեց Սովետական միության ղեկավարը ղարաբաղցիների պահանջին – գրում է Սիմոնյանը - «ղարաբաղցիներ, որոնք Սովետական Միության ամենէն հաւատարիմ, հաւատավոր ու նուիրեալ քաղաքացիները եղան, եւ հայրենական մեծ պատերազմին տուին ամենէն մեծաթիւ հերոսները, իրենց բնակչութեան թիւին համեմատ»[2]:

Անդրադառնալով հույն-թուրքական «աննշան» հակամարտությանը, ինչի առթիվ էլ Խրուշչովը կոչ էր հղել, «Սփիւռք»-ի խմբագիրը ավելորդ չի համարում փաստեր ու թվեր ի ցույց դնել կղզու ընդհանուր բնակչության 17 %-ը կազմող Կիպրոսի թուրքերի մասին, մինչդեռ արցախահայությունը 90% համեմատություն են կազմում «Դավիթ Բեկի երկրին մեջ»: Սիմոնյանը զարմանք է հայտնում, թե ինչե՛ր կպահանջեն և ինչպե՛ս «լսել կուտան իրենք զիրենք այդ փոքրաթիվ ու փաքրամասնություն կազմող թուրքերը, ի՛նչ հմարձակությամբ միանալ կուզեն ծովով բաժնուած Թուրքիային»[3]: Այնինչ ամեն ինչով Հայաստանին ձուլված Ղարաբաղն ու Նախիջևանը իրենց «ջախջախիչ մեծամասնութեամբ», իրենց «պատմական, կրօնական-ցեղակցական տուեալներով» կմնան Հայաստանից բաժանված՝ պատմության մեծագույն անարդարության ածելիով: Սիմոնյանը հողային հարցը դիտարկում է լայն կտրվածքով՝ նաև խորհրդային այլ հանրապետությունների առջև ծառացած նմանատիպ հարցերի համեմատական քննությամբ: Հրապարակումներից մեկում անդրադառնալով Սովետական միության մեջ տեղի ունեցող ընթացիկ

[1] Նշենք, որ արցախահայության կողմից 1963թ. ստորագրված հուշագիրը 2-րդ համարձակ քայլն էր: 1962 թվականին նույնպես ԼՂ-ի շուրջ 350 բնակիչներ նամակով դիմել էին ԽՄԿԿ Կենտկոմ՝ պահանջելով, որ Ղարաբաղը միացվի Խորհրդային Հայաստանին: Համախոսականը Խրուշչովի մակագրությամբ տրվել էր Հայաստանի այդ օրերի ղեկավարին՝ ծանոթանալու և իր եզրակացությունը Կենտկոմ ներկայացնելու համար: Բ. Ուլուբաբյանի վկայությամբ՝ ղեկավարը ծանոթացել էր և վերջին էջի տակ թողել իր ինքնագիրը, թե նման տրամադրությունների հիմքն ազգայնամոլությունն է, դաշնակցական գաղափարախոսությունը, որի դեմ մենք ամենօրյա պայքար ենք մղում: Ուլուբաբյանը չի նշում Խրուշչովին ուղղված երկրորդ հուշագիր-համախոսականի մասին, որը հրապարակվեց «Սփիւռք» շաբաթաթերթում՝ 1963թ.-ին, և որը ստորագրեցին ԼՂ-ի 2500 բնակիչներ: Խորհրդային Հայաստանում Ղարաբաղյան հիմնահարցը այս կամ այն չափով սկսել են արծարծել 1965 թվականից հետո, այնինչ Սփյուռքում, ի դեմս Լիբանանում լույս տեսնող «Սփիւռք» շաբաթաթերթի, հողերի պահանջը բարձրացվել է դեռ 1958-1959 թվականներին:

[2] «Սփիւռք», 1964, թիվ 1, էջ 1:

[3] Նույն տեղում, էջ 11:

սահմանային փոփոխություններին, «սրբագրություններին», որոնց ենթարկվել են Խազախստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղրիմ-Ուկրաինան և այլ երկրամասեր, խմբագիրը հարց է առաջ քաշում, թե ինչու «սովետական արդարադատությունը, դիալեկտիկան եւ այլն, կը գործեն ուղիղ՝ արեւելքի, կը գործեն ճկուն՝ արեւմուտքի մէջ, իսկ բու՛թ՝ հարաւի մէջ»: Ղարաբաղն իր բնակչության համեմատությամբ ինչով է տարբերվում «խազախ, թուրքմեն, ուզբեկ, գերման, լեհ փոխանակված շրջաններու բնակչութիւններու համեմատութենէն»[1]:

Անդրադարձներից մեկում «Սփիւռք»-ը խիստ դատապարտում է «Նաիրի» շաբաթաթերթի անխոհեմ հայտարարությունը, թե «Հայաստանի ներքին սահմաններու հարցը ունի իր պաշտոնական մասնագէտները, մենաշնորհեալ մունետիկները եւ բազմաշնորհ ... կապիկները», և այդ առնչությամբ հռետորական բնույթի 16 խայթիչ հարց է ուղղում թերթի խմբագրությանը՝ մեղադրելով հակազգային քարոզչության մեջ: «Կապիկնե՞ր են Աղասի Խանջյանը, Դերենիկ Դեմիրճյանը, ռամկավարները, Վազգեն կաթողիկոսը (1956, մայիսի 12), որոնք զբաղած են Ղարաբաղով», - գրում է Սիմոնյանը: - Այսինքն «Նաիրին» ճիշտ ու արդա՞ր է գտնում Ղարաբաղի բաժանված լինելը Հայաստանից, համոզված չէ՞, որ Ղարաբաղը պատմական Հայաստանի մասն է: Հարցադրումների շրջանակը ի ցույց է դնում շաբաթաթերթի աններելի վարքագիծը և գաղափարական դատապարտվածությունը Ղարաբաղի հարցի շուրջ: «Լքած ըլլալ կը թուիք Ձեր հին ճամբան, իբրեւ «հին երազ»... ,- տխուր եզրակացության է հանգում Սիմոնյանը՝ խոսքը, բնականաբար ուղղելով «Նաիրի»-ի խմբագիր Անդրանիկ Ծառուկյանին և բառախաղով շարունակում, թե մինչև երբ պիտի նա շարունակի իր «նոր ճամփան»՝ ի դժբախտություն Հայաստանի: Հարցադրումներում Ղարաբաղի հիմնախնդրով մտահոգ անձանց մեջ Սիմոնյանը տալիս է նաև Դերենիկ Դեմիրճյանի անունը: Բարեպատեհորեն հակված ենք ենթադրելու, որ ինչպես հրապարակումներից մեկում է ակնարկում, Ղարաբաղի հարցը «Սփիւռք»-ում բարձրացնելու հորդորն ու խորհուրդը հենց Դեմիրճյանից է տվել Սիմոն Սիմոնյանին: Ավելին, պարզ է դառնում, որ 1950-ականներին արդեն Սիմոնյանը ծանոթ էր Դեմիրճյանի արխիվում 2014թ.-ին Կարինե Ռաֆայելյանի կողմից հայտնաբերված բացառիկ նյութին՝ «Դատողություններ Ղարաբաղի ու Նախիջրանի մասին» խորագրով, որը գրողը հեղինակել էր 1950-ականներին, սակայն հասկանալի պատճառներով չէր հրատարակել: Փաստորեն, Ղարաբաղի հարցը սովետական վարչակարգում ապրող մեր բոլոր մեծերի համար էլ ցավ էր: Ժամանակներն այնպիսին էին, որ այդ մասին չէին կարող մտածել, ուր մնաց գրավոր կամ բանավոր հրապարակումներով հանդես գային: Սիմոնյանի այս վկայությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ նույնիսկ այդ թվականներին Դեմիրճյանը մտահոգ է եղել Արցախի խնդրով և նույնիսկ հորդորել ժողովրդին նվիրված ազատական «Սփիւռք»-ին՝ իր էջերը ծառայեցնելու ազգանվեր այդ գործին:

Շաբաթաթերթը Արցախյան հիմնահարցի շուրջ տարաբնույթ հրապարակումներ է արել նաև 1966, 1967, 1971 և 1978 թվականների թողարկումներում: Լինելով հայկական հողերի վերամիավորման ջերմ պաշտպանը՝ «Սփիւռք» -ն արձագանքում է խնդրի շուրջ եղած բոլոր զարգացումներին: 1966 թվականի օգոստոսի 8-ի Կենտկոմի քարտուղարության ընդունած որոշմանը (ըստ որի՝ հանձնանարվում էր Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարներին համատեղ ջանքերով քննել ԼՂ Ինքնավար մարզը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը միացնելու հնարավորությունը և առաջարկություններ ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ) Սիմոնյանն արձագանքում է թերթի 1966թ. սեպտեմբերի 8-ի համարում: Փարիզի «Յառաջ» թերթի հաղորդած լուրը Սիմոնյանն ընկալում է յուրովի՝ շարադրելով եզակի մի խմբագրական, ինչպես ինքն է գրում, «լուրէն անդին երկու իրողություններու շուրջ»[2]: Խմբագրականը յուրօրինակ հետադարձ հայացք է «Սփիւռք»-ում Ղարաբաղյան հիմնահարցի արծարծման ամբողջ ընթացքին: Այն կարծես հանրագումարի է բերում բոլոր ջանքերն ու ձեռնարկները: «Ինչէ՞ր գրեցինք ու չգրեցինք: Բայց ԲԱՆ Չ'ԸՐԻՆՔ: Չըրինք, ինչ որ ՊԷՏՔ է ԸՆԵԻՆՔ»,- եզրակացնում է Սիմոնյանը և խորհրդածում «Սփիւռք»-ի կողմից առաջարկված բոլոր այն կենսաշահ ծրագրերի շուրջ, որոնք հանդիպեցին անհասկացողության, անհավատ, իրենք իրենց խոնարհաբար «լուրջ» ու «լրջախոհ» հռչակած մարդկանց հակառակությանը, մարդիկ, որոնց «հայրենասիրութիւնը ամօթ ու նախատինք պիտի ըլլայ այսօր, վաղը եւ յավիտեան»: «Յառաջ»-ի հաղորդած լուրը, թե հնարավոր է լուծվի Ղարաբաղի

[1] «Սփիռք», 8 փետրվարի, 1964թ, , էջ 2:

[2] «Սփիւռք», 1966, 8 սեպտեմբերի, թիվ 35, էջ 1:

խնդիրը, Սիմոնյանը երկրորդում է ոչ միայն մեծազույն վերապահությամբ, այլև խոր ու տխուր համոզումով, որ «մեզի պէս իրաւունք պահանջել չգիտցող ժողովուրդին բան չի տրուիր»: Մեր կորցրածը հոդվածներով ու ճառերով չենք կարող վերաշահել, համոզված է խմբագիրը, իրավունքի գիտակցությունը «կ'ընթանայ ա'յլ ճամփաներէ, ուր դեռ կոխած չենք»:

Բանն այն է, որ Սիմոնյանը ի սկզբանե կարևոր դեր է վերապահել սփյուռքահայությանը՝ բարձր գնահատելով նրա հնարավորությունները հողային հարցին գործնական ընթացք տալու, համազգայնացնելու գործում: Տարբեր հրապարակումներում նա առաջարկել ու կոչ էր արել պատրաստել «հանրագրություն» և իրավունք ունեցող ու իրավազակված ժողովրդի համոզումով ներկայացնել Սովետական Միության համապատասխան մարմիններին: Խիստ կարևորել էր Սփյուռքում մեծամասշտաբ համագումարների կազմակերպումը՝ ազգապահպան գաղափարի շուրջ բոլոր քաղաքական կուսակցությունների մեկտեղումով: Քայլեր ու ծրագրեր, որոնք, ըստ Սիմոնյանի, կարող էին նպաստել հարցի լուծմանը, բայց չարվեցին, որովհետև «*նախ*՝ միացած չէինք, *երկրորդ* ՝ անհավատ էինք եւ *երրորդ*՝ իրաւունքի ու ինքապաշտպանութեան բնազդէն քիչ մը զրկուած էինք (*երրորդ տեսակէն*՝ թիւրքը, քիւրտը ր ուրիշ մը ունին շատ ու շատ)»[1]: Ղարաբաղին տիրանալու համար, Սիմոնյանի համոզմամբ, չարեցինք արժանավոր գործ և չցուցաբերեցինք համաստիճան իմաստություն:

Ընդհանուր առմամբ, «Սփիւռք» շաբաթաթերթը Արցախյան հիմնահարցի արծարծումներում գրեթե միշտ իրատեսական դիրքերում էր կանգնած: Դառնալով Արցախյան հիմնահարցի բարձրացման նախանձախնդիրն ու առաջամարտիկը Սփյուռքում և գրեթե երկու տասնամյակ քննարկելով ներքին հողային հարցերը՝ Սիմոնյանը աստիճանաբար հանգեց սեփական ուժերին ապավինելու, ազգային ինքնագիտակցությունից սկսելու համոզմունքին: Սիմոնյանի գաղափարաբանությունը ամբողջովին սփյուռքահայ իրականության ծնունդ էր՝ կուսակցական թելադրանքներից ազատ, անկաշկանդ, անկողմանալ, հայաշունչ ու հայրենապաշտ: Իրապես, թերթը հայ մտածումի անկախության բեմը դարձավ՝ գրական-գեղարվեստական արդյունավորումներից բացի կարևոր դերակատարություն ունենալով ազգային այժմեական խնդիրների վերհանման, լուծման ուղիների որոնման, հայի ցավը աշխարհալուր դարձնելու, հայության բոլոր հատվածներին կամրջելու գործում: Հրատարակման պահից Արցախյան հիմնահարցը մշտապես եղել է «Սփիւռք»-ի տեսադաշտում: Թեմատիկ այդ շերտի ուսումնասիրությունը ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև արդիական-քաղաքական նշանակություն:

[1] «Սփիւռք», 8 սեպտեմբերի, 1966թ. , թիվ 35, էջ 1: